600.0388.07.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2016 թվականի №388Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) անհատ ձեռնարկատեր Վարուժան Վարդանյանի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2016 թվականի նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի ժամկետը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասը, երկարաձգվել է տասն օրով,

բ) վարչական վարույթի շրջանակում անհատ ձեռնարկատեր Վարուժան Վարդանյանը փաստացի կատարել է ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2016 թվականի նոյեմբերի 1-ից անհատ ձեռնարկատեր Վարուժան Վարդանյանի նկատմամբ օրենքի 17.1-րդ հոդվածի

պահանջների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
7 դեկտեմբերի 2016թ.